րել է, իր զինված ձիաւոր խմբով գիշերը մտնում է գիւղ և գիւղացիներից պահանջում 260 թուման կանխիկ փող։ Գիւղացիները մերժում են, որի վրայ Մամ-Թաղին իր նաճուղական քաղաքականութիւնն է գործադրում. սպանում է գիւղացիներից Աբրահամ Յարութիւնեանին։ Գիւղացիներն աւազակի թողած զարգանդից անմիջապէս տալիս են 260 թուման և այնուհետև Մամ-Թաղին 50 լիտր էլ գարի տուգանք վերցնելով հեռանում է գիւղից։

1918 թւի աշնան Միրզա-Ղուլի խանի կինը՝ Բիբի խանումը մտնում է գիւղ և առնում 180 թուման. դրանից հինգ օր յետոյ Հաճի-Հասան-Ղուլի խանը մարդ է ուղարկում գիւղը և 162 թուման պահանջում. գիւղացիները մերժում են վճարել. կատաղած Հասան-Ղուլին գիշերը 800 զինուած հեծեալ և հետևակ զինուորներով շրջապատում է գիւղը. Բոլորանցիք պաշտպանողական դիրք են բռնում, որով կռիւը սուր կերպարանք է ստանում և շարունակւում մինչև լոյս, բայց վերջը Հասան-Ղուլին առնում է յիշեալ գումարն և ահագին վնաս տալուց յետոյ հեռանում։ Նոյն 1918 թւին լուռերը գիւղից բռնութեամբ առնում են մի ձի, որը սակայն մի ամիս յետոյ սատկում է. լուռերը գալիս են գիւղ և սատկած ձիու համար 200 թուման փող առնում գիւղացիներից։ Դրանից մի քանի օր յետոյ Զաֆար-Ղուլու և Մահմադ խանի մարդիկը մտնում են գիւղ և առնում 26 թուման փող և այսպէս անվերջ . . . Մի խօսքով տնտեսական կատարեալ ստրկացում, և երկրագործ ժողովրդի համար դա մի սոսկալի թշուառութիւն է։ Նա հետզհետէ ընկնում է անօգնական և յուսահատական վիճակի մէջ։ Եւ արդէն բազմաթիւ ընտանիքներ դժբախտացած են այդ հարստահարութիւններից։

—Աղաչանքս լսիր, եղբայր ջան,—դարձաւ ինձ գիւղի քէդխուդա Մ.—ն, մեր օրը սև է անցկենում էդ գողերի ձեռնից։ Մեր տուրքը վճարելուց յետոյ, մենք կարանք լաւ ապրել, ըմմա այդ անասուածները գալիս են գիւղ ազատ, հա-